ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ապրիլի 2025 թվականի N 615

ԱՊՐԻԼԻ 20-Ի՝ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ **որոշում եմ.**

1.Ապրիլի 20-ի՝ Սուրբ Հարության տոնի միջոցառման կազմակերպման և անցկացման համար համայնքի 2025 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 08.2.4 <Այլ մշակութային կազմակերպություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4267 <Կենցաղային և հանրային սննդի նյութեր> հոդվածից հատկացնել 12250 դրամ:

2.Հանձնարարել Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ս.Բաղալյանին ապահովել ֆինանսավորումը ՝ ըստ հաստատված նախահաշվի:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետի ժ/պ՝ Ա.Օհանյանի վրա:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

16 ԱՊՐԻԼԻ 2025
ք.Նոր Հաճըն